# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N102-Ա**
**19 հուլիս 2021թ**

## «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՀԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 188-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Վահան Աբրահամյանի հետ կնքած 2019 թվականի փետրվարի 18-ի N412 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի դ) ենթակետը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. 2021 թվականի հուլիսի 19-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջեդեայի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վահան Աբրահամյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2019 թվականի փետրվարի 18-ի N412 աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջեղեայի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Վաչագան Խաչատուրյանի վրա:
3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 20-ից:

7/19/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ